Հաստատված է
ՀՀ բնապահպանության և ընդերքի
տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2022 թվականի նոյեմբերի 30-ի № 12-Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ՝

1.1. Ներածություն

1.2. Ծրագրի նպատակը և խնդիրները:

2. Ծրագրի հիմնական ուղղությունները:

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության գործունեության 2023 թվականի ծրագրի կատարումն ապահովող միջոցառումներ (Ձև 1):

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ներածություն

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) որակի ապահովման վարչության 2023 թվականի տարեկան գործունեության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) կազմման համար հիմք են հանդիսացել 2014 թվականի դեկտեմբերի 17-ի «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի «Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 1358-Ն որոշումը, ինչպես նաև հաշվի են առնվել Տեսչական մարմնում 2022 թվականի ընթացքում որակի ապահովման վարչության ներքին հսկողության արդյունքում բացահայտված խնդիրները և ռիսկերը:

Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության գործունեությունն իրականացվում է որակի ապահովման վարչության տարեկան գործունեության ծրագրի հիման վրա:

1.2. Ծրագրի նպատակը և խնդիրը

Ծրագրի հիմնական նպատակն է՝ Տեսչական մարմնի գործունեության բարելավումը և շարունակական կատարելագործումը:

Որակի ապահովման վարչությունը աջակցում է Տեսչական մարմնին հասնել իր նպատակներին՝

1) Տեսչական մարմնում ռիսկերի կառավարման համակարգի գնահատման միջոցով,
2) Տեսչական մարմնի կառավարչական համակարգերի արդյունավետության գնահատման միջոցով,
3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Տեսչական մարմնի գործունեությանն առնչվող իրավական ակտերի համապատասխանությանը գնահատելու միջոցով,
4) ՀՀ վարչապետի, ՀՀ կառավարության, Տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից Տեսչական մարմնին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ հսկողության միջոցով,
5) Տեսչական մարմնի աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին գնահատման միջոցով,
6) Տեսչական մարմնի գործունեության բարելավման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու միջոցով:

Ծրագրի խնդիրն է Տեսչական մարմնի գործունեության ընթացքում թույլ տրված բացթողումների բացահայտումը և դրանցով պայմանավորված ռիսկերը:

2. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագրում առանձին ուղղություններով ներկայացված են Որակի ապահովման վարչության կողմից իրականացվող ներքին հսկողության գործառույթների շրջանակներում նախատեսվող միջոցառումները ելնելով Որակի ապահովման վարչությանն օրենսդրությամբ վերապահված լիազորություններից՝ ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի «Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 1358-Ն և ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի «Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին» N 693-Ն որոշումներից:

Կարգապահական և էթիկայի կանոնների պահպանում ուղղության շրջանակներում իրականացվում է Տեսչական մարմնի աշխատողների կողմից ՀՀ օրենսդրության, ներքին կարգապահական և էթիկայի կանոնների պահպանման վիճակի ուսումնասիրություն և վերլուծություն:

Տեսչական մարմնի դեմ բերված բողոքների նկատմամբ ներքին հսկողության շրջանակներում իրականացվում է Տեսչական մարմնի, նրա ծառայողների գործողությունների կամ անգործության և ընդունված վարչական ակտերի վերաբերյալ ստացված բողոքների ուսումնասիրություն և վերլուծություն, բացահայտվում են բողոքների պատճառները:

Տեսչական մարմնի գործունեության արդյունքների նկատմամբ ներքին հսկողությունն իրականացվում է Տեսչական մարմնի փաստացի գործունեության, մասնավորապես, վերահսկողական և կանխարգելիչ գործունեության ուսումնասիրությամբ և վերլուծությամբ:

Տեսչական մարմնի 2023 թվականի տարեկան գործունեության ծրագրի նկատմամբ ներքին հսկողության շրջանակներում ուսումնասիրվում է ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ապահովումը, սահմանված ժամկետների պահպանումը և արդյունքը, բացահայտվում են միջոցառումների կատարման խոչընդոտները:

Ծրագիրը ներառում է Որակի ապահովման վարչության կողմից Տեսչական մարմնում առկա ռիսկերի բացահայտման և գնահատման գործողությունների նկարագրությունը:

Ներքին հսկողություն իրականացնելիս ուսումնասիրվում է Տեսչական մարմնի կողմից իր գործունեության ընթացքում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքների պահպանումը:

Որակի ապահովման վարչության պետը յուրաքանչյուր եռամսյակ Խորհրդի քննարկմանն է ներկայացնում Որակի ապահովման վարչության 2023 թվականի տարեկան գործունեության ծրագրի միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հայտնաբերված խնդիրների և բացահայտված ռիսկերի մասին՝ ներկայացնելով առաջարկություններ Տեսչական մարմնի գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

Ձև 1

3. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

	Գործառույթ/ Միջոցառում	**Գործողությունների նկարագրություն**	**Կատարման ժամկետ**
I. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ			
1	Ներքին հսկողություն կարգապահական կանոնների պահպանման նկատմամբ	Ուսումնասիրվում է՝ ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջների պահպանման վիճակը, արձանագրված խախտումները, ձեռնարկված միջոցառումները, ծառայողական քննությունների նշանակումը, ընթացքը և արդյունքները: Բացահայտվում են խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	Յուրաքանչյուր եռամսյակ
2	Ներքին հսկողություն Էթիկայի կանոնների պահպանման նկատմամբ	Ուսումնասիրվում է՝ էթիկայի (բարեվարքության) կանոնների (այդ թվում՝ նվերներ ընդունելու արգելք, անհամատեղելիության պահանջներ, այլ սահմանափակումներ, շահերի բախում) խախտումների վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց ուսումնասիրության արդյունքները: Բացահայտվում են խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	Յուրաքանչյուր դեպքում
II. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ			

3	Ներքին հսկողություն Տեսչական մարմնի դեմ բերված բողոքների նկատմամբ	Ուսումնասիրվում են՝ Տեսչական մարմնի, նրա ծառայողների գործողությունների կամ անգործության կամ նրա կողմից ընդունված վարչական ակտերի վերաբերյալ ստացված բողոքները. 1) ուսումնասիրվում են Տեսչական մարմին ներկայացված բողոքները, վարչական (բողոքարկման) վարույթների ընթացքը, ընդունված որոշումները, իրականացվում է բողոքների պատճառների և արդյունքների վերլուծություն, 2) ուսումնասիրվում են դատական կարգով բողոքարկված գործերը, գործի լուծման համար ուժի մեջ մտած որոշումները, իրականացվում է պատճառների և արդյունքների վերլուծություն: Բացահայտվում են խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	Յուրաքանչյուր եռամսյակ
III. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ			
4	Ներքին հսկողություն Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողական աշխատանքների նկատմամբ (ստուգումներ, ուսումնասիրություններ, դիտարկումներ, վարչական վարույթներ)	Ուսումնասիրվում և վերլուծվում են համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարված աշխատանքները նշված գործառույթի շրջանակներում՝ իրականացված ստուգումների, ուսումնասիրությունների, դիտարկումների և վարչական վարույթների վերաբերյալ գործերի ուսումնասիրություն և վերլուծություն: Բացահայտվում են խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	Յուրաքանչյուր եռամսյակ
IV. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ			
5	Ներքին հսկողություն Տեսչական մարմնի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների	Ուսումնասիրվում է՝ Տեսչական մարմնի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների շրջանակներում կատարված աշխատանքները, ժամկետների պահպանումը: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա բացահայտվում են բացթողումները, խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	Յուրաքանչյուր եռամսյակ

	կատարման նկատմամբ		
6	Ներքին հսկողություն պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկման իրականացման նկատմամբ	Ուսումնասիրվում է՝ Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջը, ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի և ենթաօրենսդրական ակտերի համապատասխան դրույթներով պահանջվող տեղեկատվության հրապարակումների և սահմանված ժամկետների պահպանումը: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա բացահայտվում են բացթողումները, խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	Յուրաքանչյուր եռամսյակ
7	Ներքին հսկողություն Տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագրի կատարման նկատմամբ	Ուսումնասիրվում է՝ 1) Տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների շրջանակներում կատարված աշխատանքները, դրանց կատարման ժամկետների պահպանումը. 2) աշխատանքների կատարման համար օգտագործված միջոցները, եղանակները (պաշտոնական կայքէջ, ֆեյսբուքյան էջ, ԶԼՄ-ներ, դասընթացներ, հանդիպումներ, քննարկումներ, ձեռնարկների կամ թերթիկների տրամադրում և այլն). 3) տնտեսավարող սուբյեկտների համար իրականացված իրազեկման, խորհրդատվության, բացատրական աշխատանքները, դրանց քանակը, աշխատանքների կատարման ժամկետների պահպանումը. 4) նոր իրավական ակտեր ընդունվելու կամ ուղեցույցներ հրապարակվելու, ինչպես նաև դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում համապատասխան ժամկետում տնտեսավարող սուբյեկտների իրազեկման ապահովումը։ Ուսումնասիրության արդյունքների հիման վրա բացահայտվում են բացթողումները, առկա խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	Յուրաքանչյուր եռամսյակ

8	Ներքին հսկողություն տրված հանձնարարականների կատարման նկատմամբ	Ուսումնասիրվում է՝ ՀՀ վարչապետի, ՀՀ կառավարության, Տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից Տեսչական մարմնին տրված հանձնարարականների կատարման ընթացքը: Բացահայտվում են խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	Յուրաքանչյուր եռամսյակ